



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԱՐԴՈՒՆ ԱՐԵՒԵԼՑՈՒ «ՀԱԽԱՔՈԽՄՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ» ԿՈՐԱԾ ԱՂՅԵՒՔՆԵՐԸ

Ինչպէս արդէն նշել ենք, բանասիրութեանը վաղուց յայտնի է, որ Վարդուն Արեւելցին իրուեւ սկզբնաղբիւր օգտագործել է Մխիթար Անհցու «Պատմութիւնը»⁽¹⁶⁾: Այն մեզ հասել է մասամբ, միայն Առաջին Պրակը, ըստ այսմ էլ իրաւամբ համարւում է հայ պատմոգրութեան կորած ազբիւրներից մէկը: Լինելով հայ ժողովրդի առաւելապէս ԺԱ.-ԺԲ. գարերի (մանաւանդ Երրորդ Պրակը, ըստ հեղինակի իսկ վկայութեան)⁽¹⁷⁾ պատմա-քաղաքական կետնքի, հիմնականում Սելջուկների արշուանքների ու աիրավիտութեան ժամանակաշրջանի վերաբերեալ աշխատութիւն և, բնականաբար, ունինալով ազբիւրագիտական - բնագրական կարևոր նշանակութիւն ոչ միայն հայ, այլև արաբական ու պարսկական ազբիւրների համար, շարժել է թէ հայոգէտների և թէ՝ արեւելագէտների համարքրքութիւնը: Այսու, ինքնին հասկանալի է. թէ ինչքան կարևորութիւն ունի նման մի սկզբանաղբիւրի վերաբերեալ ամէն մի օգտակար հասագութիւն, առաւել ևս՝ նրա առանձին նշխարների ի յայտ բերելը, այն էլ ժամանակագրականորէն նրանից ոչ շատ ուշ յօրինուած մի աշխատութեան մէջ, ինչպիսին Վարդուն Արեւելցու «Հաւաքումն Պատմութեան» երկն է:

⁽¹⁶⁾ Վարդան Արեւելցի, «Հաւաքումն Պատմութեան», Յառաջաբան, էջ է: Մխիթար Անհցի, «Պատմութիւն», Ս. Գետերըրդ, 1879, էջ Ա:

⁽¹⁷⁾ Վարդան Արեւելցի, նշուած աշխատութիւնը, էջ 3-4:

Մեր ազբիւրագիտական հետազօտական աշխատանքները այս առնչութեամբ մեզ բերել են այն աւելի քան հաւատնական եղբակացութեան, որ Վարդուն Արեւելցու նշուած աշխատութեան մէջ Մխիթար Անհցու երկից ուզզակի կամ քաղուածաբար առնուած հատուածները աւելին են, քան ենթագրուել է: Առ այսօր խօսք է գնացել միայն մի հատուածի մասին, որն զբաղեցնում է 91-92 («Իսկ յաղագս Վրաց ... այս ըստ Մխիթարայ Երիցու ասիցն է») և 93-97 («Իսկ որ զԱմմիրալումումնեացն կարգն ... որ կայր մինչ ի պատմագիրս. որում պատիւ ի Տեսանէ Աստուծոյց») էջերը, և համաձայն Վարդուն Արեւելցու իսկ վկայութեան, ստուգապէս առնուած է Մխիթար Անհցու «Պատմութիւն»ից: Բայց միթէ՞ ընդամէնը այս է:

Յայանի է, որ Մխիթար Անհցու երկն սկսում էր հնոգոյն ժամանակներից՝ Ագոմից և հասնում մինչև 1190 ական թուականները, կամ աւելի ստոյգ՝ 1193 թուականը: Մխիթար Անհցու իսկ խոսափանութեամբ, այս երկում օգտագործուել են օտար հեղինակների մի շարք երկեր, սկսում եւսերէսս կհսարացու «Եկեղեցական Պատմութիւն»ից ու «Քրոնիկոն»ից, իսկ հայ հեղինակներից՝ Ագոմանցինուի երկից, վերջացրած Սամուէլ Անհցու աշխատութեամբ⁽¹⁸⁾, ուրիմն սկզբից մինչև իր ժամանակները ներառեալ:

Նախապէս Յովհաննէս Սարկաւագի

⁽¹⁸⁾ Նոյն տեղում, էջ 15:

երկից վարդան Արևելցու օգտուելու վերաբերեալ մեր խօսքի մէջ նշեցինք, որ գրանից որոշ հատուածներ կարող էին նաև Մխիթար Անեցու «Պատմութեան» միջացով փախանցաւել վարդան Արևելցու աշխատութեանը: Այդպիսի հատուածներ որոնելի են յատկապէս 88-103 էջերում, որտեղ էլ առկայ են Մխիթար Անեցու երկից առնուած ծանօթ և դեռ անձանօթ քաղուածները: Նման ենթադրութեան ի՞նչ հիմք ունենք.

ա) Նշուած սոյն էջերում կան պատմական շատ իրազութիւնների մանրամասներ, որոնք մեզ ծանօթ միւս աղբերներում բացակայում են,

բ) Դրանք վերաբերում են այն ժամանակահատուածին (XI-XII դդ.), որի մասին հիմնականուում պատմում են Մատթէոս Ռւահայեցին, Յովհաննէս Սարկուագը և Մխիթար Անեցին՝ ինքը: Առկայն դրանք չկան նաև Մատթէոս Ռւահայեցու երկում,

գ) Որոշ տերմիններ, յատկապէս Սիլջուկներին և Սարչուքը ձևով կոչելը յատակ է Յովհաննէս Սարկուագին և իրեն՝ Մխիթար Անեցուն(19),

դ) Անառարկելի է, որ վարդան Արևելցին օգտուել է Մխիթար Անեցու աշխատութիւնից,

ե) Ոչ մի այլ մեզ յայտնի աղբիւրում չարտոցուած յիշեալ մանրամասները, տեղենայն հաւանականութեամբ, գտլիս են սկզբնապէս Յովհաննէս Սարկուագի երկից,

զ) Հազիւթէ Մխիթար Անեցին զանց առնէր նման մի սկզբնազրիւր, որը բատերեայթին, այդ ժամանակների իրազորաւթիւնների վերաբերեալ հիմնական պատմագրական յուշարձանն էր:

Կարծում ենք, այսքանը միանդամայն բաւարար է մեր ենթադրութեան համար:

92րդ էջի սկզբում տւարտում է նախարդ էջից սկսուած մի հատուած, որի մասին ինքը՝ վարդան Արևելցին անմիջապէս վկայում է, թէ այս ըստ Մխի-

թարայ երիցու տակցն» է(20): Սակայն, մեր կարծիքով, դա չի վերաբերում սոսկ Ծ (ԾՕ) տառանիշով զատորութեած տուեալ հատուածին, այլև՝ նախագիր ԽԶ-ԽԹ հատուածներին (էջ 87-91 և իսկ պատուական թագաւորն ... ամս յիսուն և երկուշ): Բէեւ որոշ ընդհանրութիւններ նկատելի են Ասողիկի, Յովհաննէս Դրասիանակերտացու, Սամուէլ Անեցու, Կիրակոս Գանձակեցու երկերի համեմատութեամբ, սակայն հիմնականում ուրոյն են, անկախ նշուած երկերից, որոնք պատմմել են այդ ժամանակաշրջանի մասին: Իսկ ո՞րտեղից են քաղզուած, ևթէ ոչ Յովհաննէս Սարկուագի և Մխիթար Անեցու երկերից, աւելի որոշակի վերջինիցից: Այսպէս ենք կարծում, որովհետեւ յիշեալ հատուածների ստուար մասը նոյնպէս բացակայում է նախընթաց գրաւոր աղբիւրներում և, աւելին, այն ընդհանուր յօրինուածքային միասնութեան մէջ է ստուգապէս Մխիթար Անեցու երկից առնուած ԾԳ-ԾԴ (էջ 93-97) հատուածների պատմական նիւթի հետ, մասնաւոնդ որ սոյն երկի այս հրատարակութեան մէջ կատարուած հատուածների բաժանումը հեղինակային չէ: Ուստի, այս ըստ Մխիթարայ Երիցու տակցն է» խոսավոնութիւնը հիմք չկայ տարածելու միմիայն Ծ հատուածի վրայ, այլ նաև՝ ԽԶ-ԽԹ հատուածների վրայ:

Աղբիւրագիտական և բանասիրական նման հիմքերով մեզ միանգամայն հաւանական է թուում, որ ԾԱ-ԾԲ (էջ 92-93, շիսկ վասպուրականի թագաւորքն ... և եղին զՄիքայէլ ամս եօթն) հատուածները ևս քաղզուած են Մխիթար Անեցու երկից: Նկատելի է, որ գրանք նոյնպէս ըստ մհճի մասին գտլիս են այն նոյն աղբիւրից, ինչ իրենց անմիջապէս նախարդող ԽԶ-Ծ և անմիջապէս յաջորդող ԾԳ-ԾԴ հատուածները: Բովանդակութեան տուամով սոյն հատուածների ամէնամերձուոր աղբերոը ենթադրելի էր Թովմա Արծրունու և Արիստակէս Լաստիվերտացու և Պատմութիւնների հետ, սակայն մեր աղբիւրագիտական քննութիւնը ցոյց է տալիս, որ ամենայն հաւանականութեամբ,

(19) Սամուէլ Անեցի, «Հաւաքմունք ի Գրոց Պատմագրաց», Վաղարշապատ, 1893, էջ 98: Մխիթար Անեցի, Նշուած աշխատութիւնը, էջ 48:

(20) Նոյն տեղում, էջ 92:

Վարդան Արեկելցին նշուած այս երկու երկրից էլ չի օգտաւել: Ուստի, հիմք չկայ ՄԱ-ՄԲ միջանկեալ հատուածները օտարելու տուեալ ԽԶ-ՄԴ միասնութիւնից և չընդունելու, որ դրանք ևս բիւռմ են Մխիթար Անեցու աշխատութիւնից:

Ստեղյան, միաժամանակ գանում ենք, որ այս միասնական շղթայից օտարելի չեն նուև ՄԴ հատուածի երկրորդ կէսը և ՄԵ-ՄԸ հատուածները (Էջ 98-103 «Ի չորհիքարիւր եօթանասուն թուին . . . և գնէ նմտ թագ», «Առ առ գնաց տէր Պետրոս . . . որպէս Տէրն զիսաչն ի Հրէից»): Այսպէս ենք մտածում ոչ միայն Նրա համար, որ դրանց բովանդակութիւնն էլ հիմնականում մեզ յայտնի է գանուում այստեղից՝ Վարդան Արեկելցու սոյն աշխատութիւնից և միայն մասնակի ընդհանրութիւններ ունի Մատթէոս Աւուայիցու, Սամուէլ Անեցու և Կիրակոս Գանձակցու երկերի հետ, այլև Նրա համար, որ այդ հատուածները շարունակութիւնն են այն ընդարձակ հատուածի (Էջ 93-97), որը սայդ Մխիթար Անեցու գրչի արգասիքն է, այլև Ծիի այն մասնակի հատուածի (Էջ 97), որն սկսում է չընոյն այր տուէ»⁽²¹⁾ մատնանշող յիշատակութեամբ: Իսկ այդ «նոյն այրը», ըստ առկայ շարադրանքի ու ակնարկութեան, կարող էր լինել միայն Մխիթար Անեցին, քանի որ նախորդ հատուածն էլ շարադրուած է ըստ նրա հիմք պատուական երեցն Մխիթար Անեցին որոյ յիշատակն ի գիրն կենաց, այսպէս տուէ»⁽²²⁾ աներկրայելի վկայութեան: Հետեւաբար, շատ հնարաւոր է, որ Վարդան Արեկելցին Մխիթար Անեցու աշխատութիւնից շարունակել է իր քաղուածները մինչև յիշեալ հատուածները ներտաեալ և, թերեւ, մինչև 1190 ական թուականների իրադարձութիւնները պատմող հետագայ որոշ էջեր:

Վարդան Արեկելցու «Հաւաքումն Պատմութեան» մէջ կայ մի բաւականին ընդարձակ հատուած, 25 էջ ծաւալով (Էջ 122-146 «Ի հինգ հորիւր եօթանասուն և ինն թուին . . . և ի յատակ մտաց

ծննդականաց»), որն ունի առաւել ուրոյն, մեզ հասած պատմագրուկոն նախարդ աղբիւրներից համեմատաբար շատ անկախ բովանդակութիւն ու չարագրանք: Պատմուազ իրագարձութիւնները վերաբերում են 1130-1251 թուականներին, իսկ Վարդան Արեկելցին, իր իր երկը յօրինում էր 1260 ական թուականներին, պարզ է, որ շուրջ 100 նախընթաց տարիների միջացին տեղի ունեցած գէպքիրի վերաբերեալ նիւթեր հաւաքելու համար պիտի գիմէլ նախապէս գրուած աղբիւրի կոմ աղբիւրների: Ինչպէս արդէն դիմել տուինք, առեւալ գէպքում մեզ հասած գրաւոր սկզբնաղբիւրները մատնանշելը գոհացուցիչ համարել կարելի չէ, որովհետեւ դրա համար համոզիչ բնտգրական զուգահեռներ չկան: Մատթէոս Աւուայիցու, Սամուէլ Անեցու և Կիրակոս Գանձակցու նշուած պատմագրակոն աշխատութիւնների հետ նկատելի ընդհանուրութիւնները ևս բաւարար մերձուուր առնչութիւն ու ծաւալ չունին և իրաւունք չեն տալիս խորհելու, թէ Վարդան Արեկելցին այս առիթով ուղղակի օգտուել է յիշեալներից:

Մեզ թուում է, թէ համեմատաբար աւելի սաոյդ խօսք կարող է լինել դարձակ Մխիթար Անեցու երկի, և այդ ժամանակաշրջանի մեր ամէնաբանիմաց գիտնուկան վլորդապետներից Ցովհաննէս վանականի պատմագրական աշխատութեան մոսին (ցաւօք սրափի, նոյնպէս առ այսօր մեզ չի հասել և ըստ այդմ կորած է համարւում), ի հարկէ, քանի դեռ այդ ժամանակամիջացի վերաբերեալ պատմագրական այլ թէկուզ դարձեալ կորած աղբիւրի շուրջ տեղեկութիւնները չեն լինի:

Ինչպէս նշել ենք քիչ վերը, Մխիթար Անեցին իր «Պատմութիւն»ը հասցել է գոնէ մինչև 1190-1193 թուականները: Եթէ անգամ ենթադրելու լինենք, թէ Վարդան Արեկելցին յիշեալ երկից իր ուղղակի քաղուածները չի շարունակել մինչև նշուած թուականների իրագարձութիւնները, սկզայն բացառուած չէ, որ նրա օգտագործած միւս, տուեալ գէպքում ոչ մեզ հասած, աղբիւրները իրենք օգտուած լինէին դրանից և միջնորդա-

⁽²¹⁾ Վարդան Արեկելցի, նշուած աշխատութիւնը, Էջ 97:

⁽²²⁾ Նոյն տեղում, Էջ 94:

բոր վիստանցած Վարդան Արեւելցուն։ Այս ելակէտից բացի, հետաքրքիր է, որ վերոնշեալ հատուածի 137րդ էջում Մխիթար Անեցու մասին հետեւեալ ուշագրու վկայութիւնն է թողել. «Զայնու ժամանակօք թարգմանեաց Մխիթար, պատուեալ քահանայն Կաթողիկեցի, զպատճառու խաւարման արեգուկան և լուսնի ի պարսկէ միջէ Աճիէ անուն . . .»⁽²³⁾, իսկ շարունակութեան մէջ բիրել է այնպիսի մանրումաներ, որոնք, անսարակոյս, առնուած պիտի լինեն այդ թարգմանութիւնից, որովհետեւ խիստ և մտանազիտական են և ոչ ազատ շարադրանքի արդիւնքը⁽²⁴⁾:

Ահա թէ ինչու մեզ թուում է, որ գոնէ մինչև 137րդ էջը Մխիթար Անեցու և Պատմութիւննից և սոյն թարգմանութիւնից ուղղակի քաղուածներ կան անպայման։ Սակայն, ըստ երեսյթին, կան քաղուածներ նուև միջնորդարար ներառուած։ Այսպէս ենք կործում, նկատի ունենալով մտանաւորաբար հետեւեալը։ Նախ, սոյոյգ է, որ Վարդան Արեւելցին ձեռքի տոկ ունեցել է Յովհաննէս Վանականի յիշեալ երկը⁽²⁵⁾։ Թէկուզ և նու տուում է, թէ Յովհաննէս Վանականը, ինչպէս նուև Կիրակոս Գանձակեցին «Հօրն համանման» (իմա՝ Յովհաննէս Վանականի) որոշողի գրել են 1236-1265 թուականների իրադարձութիւնների մասին, առեւայն այդ չեն նշանակում, որ նրանք գրոծ պիտի լինէին հէնց միայն այդ թուականների դէպքերի վերտրերեալ և լուս մնային նախընթաց, այդ թուում նուև Մխիթար Անեցու և Պատմութեանն մէջ նկարագրաւած իրադարձութիւնների մասին։ այլապէս Վարդան Արեւելցին սխալ թոյլ տուուծ կը լինէր։ Չէ՞ որ Կիրակոս Գանձակեցին որոշողի պատմում է գեռես 4րդ գարում աղջի ունեցած եղելութիւններից, իսկ Յովհաննէս Վանականը մահացել է 1251 թուականին, էլ ինչպէս կորսղ էր նորել մինչև 1265 թուականը աղջի ունեցած դէպքերի մասին։ Այսպէս որ Վարդան Արեւելցու սոյն վկայութիւնը, պարզ

է, ակնարկ չէ այն մասին, թէ յիշեալ երկու հեղինակները դրել են միայն 1236-1265 թուականների մասին։ թէ, մանաւանդ, Յովհաննէս Վանականը այդ թուականներից տառաջ պատահած իրողութիւնների վերտրերեալ լուել է։ Նա ընթերցողին պարզապէս կամեցել է յայտնել, որ ինքը 1236-1265 թուականների անցուգարձերի մասին շատ քիչ է խօսում, որովհետեւ դրանց վերտրերեալ մանրամասն պատմուած է յիշեալ հեղինակների երկերում, որոնց ինքը չի կամենուած իր իսկ բառերով տառձ՝ «Երեքնել»⁽²⁶⁾։

Միաժամանակ որոշ է, որ Վարդան Արեւելցին առանց համապատասխան գրաւոր աղբիւրների չեր կարող գրել նախընթաց, առեւեալ պարագային, ասենք, 1236 թուականից տառաջ 1130ական թուականներին աղջի ունեցած դէպքերի մասին։ Այս առնչութեամբ, Մատթէսս Առաջեցու շարունակողի՝ Գրիգոր Երէց Քէռունցու շարադրածի և Սամուէլ Անեցու և Ժամանակոգրութեան հետ եղած համեմատելի ընդհանրութիւնները թէ՛ քիչ են և թէ՛ ուղղակի կապի արդիւնք չի կորելի համարել, նոյնպէս նաև Վրաց ժամանակագրութիւնների հետ եղած առնչութիւններ թէկ քիչ չեն, բայց բառացի կամ անմիջնական կապ, մեր կարծիքով, նկատելի չէ, ինչպէս ցոյց են տալիս աղբիւրագիտուկան մանրակրկիտ համեմատութիւնները։ Կիրակոս Գանձակեցու և Պատմութեան հետ ուղղակի կապ կայ, ըստ երեսյթին, սակայն այնքան քիչ, որ տուեալ դէպքում մտանաւոր նշանակութիւն չունի իրրե աղբիւր, էլ չենք ասում, որ Կիրակոս Գանձակեցին ևս այս ըրջանի դէպքերի համար կարող էր դիմել միայն այն միեւնոյն աղբիւրներին, որոնցից օգտուել է ինքը՝ Վարդան Արեւելցին։ Այլ ձանօթ աղբիւրներ չեն առնչուած այս ըրջանի 1130ական թուականների մասին պատմող բնագրական հատուածներին։ Լստ այսմ, կարելին մնում է այն, որ Վարդան Արեւելցին բուականին ծաւալուն նիւթ քաղել է մեզ չնասած պատմագրական աղբիւրներից։

Տուեալ դէպքում, ի դէպ, բացառ-

(23) Նոյն տեղում, էջ 137։

(24) Նոյն տեղում, էջ 137-138։

(25) Նոյն տեղում, էջ 147։

(26) Նոյն տեղում, էջ 147։

ւում է Յավհաննէս Սարկաւագի աշխատաթիւնինը ևս, քանի որ նու արդէն մահացել էր 1130 թուականից նոյնիսկ մէկ տարի առաջ։ Մեր իմացած կորած աղբիւրներից մնաւմ են երկուսը՝ Միսիթար Անեցու և Յավհաննէս Վանականի երկերը և էլի մի-երկու աշխատութիւն, որոնց վերաբերեալ համառօտ կը նշենք ստորեւ։

Այսպիսով, միանգամայն հնարաւար ու հաւանական է, որ Վարդան Արեւելցու նշուած աշխատութեան մէջ Միսիթար Անեցու «Պատմութեան» կորած պրակներից անմիջաբար կամ միջնորդաբար փոխառութիւններ պահպանուած լինեն 1130-ական թուականների մասին պատմաղ վերոյիշեալ 122-137 էջերի տարրեր հատուածներում ևս։ Ուստի տարակոյս չկայ, որ Միսիթար Անեցու աշխատութեան հետքերը Վարդան Արեւելցու յիշեալ երկի մէջ չատ աւելի են, քան կարծուել է մինչ հիմա։

Տարակոյս չի յարուցում նաև այն, որ Վարդան Արեւելցին իրեւ պատմական սկզբնազրիւր օգտագործել է Յավհաննէս Վանականի նոյնպէս առ այսօր մեզ չհասած պատմագրական աշխատութիւնը։ Առ նուազն 1190-ական թուականներից այս կողմ (մինչեւ ուր Միսիթար Անեցին հասցըրել է իր «Պատմութիւնը») առ 1240-1250-ականն թուականները ընկած ժամանակահատուածի պատմական նիւթի մի կարեւոր մասը Վարդան Արեւելցին քաղել է նրա այն երկից, թէկուզ Համառօտքերելով և միայն զթիւ ժամանակին նշանաւոր իրաց և գործոց, ինչպէս արդէն ինքնին իսկ խոստովանում է⁽²⁷⁾։ Տուեալ դէպքում դժուարը հաւասարի հատուածներ ճշգելն է, քանի որ ուղղակի համեմատութեան հնարաւորութիւն, բնական է, չենք կարող ունենալ յիշեալ սկզբնազրիւրի կորած լինելու պատճառով։ Բայց ամէնամեծքաւոր ճշգութեամբ կարող ենք մատնացոյց անել յամենայն դէպո գոնէ 138-148 էջերում զետեղուած ԶԲ-ԶԸ հատուածները։ «Յաւաւըս ժամանակաց այսոցիկ . . . այր անագահ և պատերազմաէր և աղօթական»։

Այսուղ պատմուաղ դէպքերը ոչ մի-

այն ժամանակագրականօրէն պատշաճում են մեր կարծիքին, այլև նրանով, որ միծ մասամբ այնպիսին են, որոնք կուտարուել են Յավհաննէս Վանականի մերձակայ ու անմիջական շրջապատռում։ Թերեւս երբեմն նուե իր ներկայաւթեան, և հիմնականուում առնչւաւմ են Զաքարեանների գործունէութեան, որի նկատմամբ ինքը իրեւ պատմագիր անհնար էր որ անտարբեր մնար ու լայն տեղ չտար դրան իր «Պատմութեան» մէջ։

Դրանք թէկ տեղ-տեղ նման են միայն կիրակոս Գանձակեցու երկի համապատասխան պատմումներին⁽²⁸⁾, սակայն դրանով գարձեալ իրողութիւնը այլ վիճակ չի ստանայ, որովհետեւ, ինչպէս տեսանք, Վարդան Արեւելցին ինքն իսկ յստակ արձանագրել է, թէ կիրակոս Գանձակեցին դրանք գրի է առեւ Հօրն [իմա՝ Յավհաննէս Վանականի — Փ. Ա. Հ.] համանման»⁽²⁹⁾։ Այլ մեզ հասած զրաւոր աղբիւրների հետ ուղղակի կոպ չի նկատւում։ Բացի այդ, գրանց բավանդակութիւնը պատմաղ կորած այլ աղբիւրների վերաբերեալ տեղեկութիւն չունինք. Միսիթար Անեցին այդ տարիներին (1195-96 թուականներից յիշայ) արգէն չկար, իսկ Վարդան Արեւելցին միառժամանակ յիշայ է ծնուել, բնական է, գոնէ սկզբնական տարիների վերաբերեալ չէր կարզ ուրույնարար, ուրանց այլ աղբիւրի, հանգէս գտլի Յիշենք նուե հետեւեալ կարեւոր հանգամանքը։ Վարդան Արեւելցու մօտ յիշեալ հատուածները բնագրական որաշակի սահմանազծով տարանջատուած են սկզբից ու վերջից։ Առաջին հատուածը կտրուկ սկսում է այստեղից, որտեղ վերջանուած է Ոճիէ պարսիկի աշխատութեան Միսիթար Անեցու թարգմանութիւնից քաղաւած հատուածը, իսկ վերջին՝ 148րդ էջն աւարտուած է Հռոմի Պապի կողմից առաջարած թղթի կապակցութեամբ Յավհաննէս Վանականի մասին եղած պատաւումով։ Անմիջապէս յաջորդող տողերը

(27) Հմմտ. Կիրակոս Գանձակեցի, նշուած աշխատութիւնը, էջ 150-151, 162-166, 186-189, 204-207, 243-244, 329-333,

(28) Վարդան Արեւելցի, նշուած աշխատութիւնը, էջ 147։

(29) նոյն տեղում, էջ 147։

ոչ միայն շիշտակիօրէն տարբեր բռվանդակութիւն ունեն (մարտիսի մասին), այլև յատկանշաբար վերաբերում են 1252 թուականին, Յովհաննէս Վանականի մահաւան յաջորդ իսկ տարուան, որի մասին, ինչ խօսք, նու ոչինչ զրել չէր կարող փաստագրական ու բնագրական այս առնմանագիծը, նշուած 138-148 էջերի հետո սկզբից ու վերջից, ըստ երեսյթին, որոշակի յաւշում է, որ դրանց միջև պարփակաւած յիշեալ հատուածները բիսում են մի, մեզ անյայտ ազրիւրից, որը Յովհաննէս Վանականի իսկ կորած պատմագրական աշխատութիւնն է:

Վարդան Արևելցին յատակ յիշատակութիւն է թողել, թէ ինքը օգտուել է նաև «Վահրամոյ՝ որդւոյ Տիգրանոյ վիրապգրի» աշխատութիւնից⁽³⁰⁾: Ինչպէս յայտնի է, այս անունը կրող հեղինակի որեւէ երկ մեզ չի հասած: Միսիթար Այրիվանեցին ևս յիշում է մի Վահրամ պատմոգիր, սակայն ոչ որպէս «օրդի Տիգրանայ», այլ՝ «Տիգրանակերպացի»⁽³¹⁾: Բատ երեսյթին, խօսքը նոյն անձնաւութեան մասին է: Ուստի, Վահրամը գարձեալ մնում է իրեւ կորած պատմագրական ազրիւրի հեղինակ:

Առհասարակ այս անունով հայ բանասիրութիւնը չի զբաղուել, կամ գրեթէ չի զբաղուել: Այսանդ այդ հարցը քննելու տեղը չէ թէև, բայց առաւելութար բաւարար տուեալներ ու փաստարկներ չունենալով, մենք ևս այսօր չենք կարող անդրագաւոնալ դրան, սակայն կարսղ հնք ասել, որ Վարդան Արևելցու վկայութիւնը որևէ չփոթութեան հատեւանք չէ, ընդհակառակը, տարակոյն չկայ, որ Վահրամ անունով («օրդի Տիգրանայ» կամ՝ «Տիգրանակերպացի») հեղինակ եղել է, ունեցել է պատմագրական երկ, որտեղ պատմել է Սելջուկների մասին, և որը առ այսօր մեզ չի հասել, սակայն Վարդան Արևելցու համար հանդիսացել է սկզբնազրիւր:

(30) Նոյն տեղում, էջ 94:

(31) Մխիրար Այրիվանեցի, «Պատմութիւն Հայոց», Մոսկովա, 1860, էջ 25:

Այս ժամանակների վերաբերեալ պատմագրական մեզ առ այսօր չհասած երկերից է նաև Յովհաննէս Կողեանի «Պատմութիւն» Բագրատունեաց» աշխատութիւնը: Թէև Վարդան Արևելցին դրանից օգտուած լինելու որևէ խօստավանութիւն չունի, սակայն բացառուած չէ, նոյնիսկ շատ հաւանական է, որ նրանից որոշ քաղուածներ, եթէ ոչ ուղակի, գէթ միջնորդաբար, յատկապէս Միսիթար Անհցու երկի միջոցավ, մուտք գործած լինեն «Հաւաքառումն Պատմութեան» մէջ, քանի որ վերջինս ինքը վկայում է, թէ իր երկի ազրիւրներից մէկն էլ եղել է Յովհաննէս Կողեանի «Բագրատունեաց Պատմութիւն»ը⁽³²⁾:

Ահա համառօտակի այն ամէնը, ինչ այս տաիթով կուզող է ինք ասել Վարդան Արևելցու «Հաւաքառումն Պատմութեան» և նրա պատմագրական այն սկզբնազրիւրների տանչութիւնների մասին, որոնք կորած են համարուում առ այսօր: Հասկանալի է, անշուշա, թէ ինչու սոյն վերջին հանգամանքը հանրաւորութիւն չի տալիս աւելի որաշակի եղբակացութիւնների, մանաւանդ ազրիւրագիտական այսաքան բարդացած խնդիրներում, առաւելաբար երբ ստուգանից մէկ համեմատական եղբը բացակայում է և խօսքը գնում է մի յօդուածի սահմաններում: Այսուհանդերձ, զատահ ենք, որ Վարդան Արևելցու նշուած երկի ազրիւրագիտական մանրակրիտ քննութեան հիման վրայ այսակա արծարծուած տուեալներն ու փաստարկունները համոզիչ են դարձնում այն հիմնական եղբակացութիւնը, թէ յիշեալ «Հաւաքառումն Պատմութեան» աշխատութեան մէջ պատմոկան հարուստ ու ծաւալուն նիւթ է հաւաքառուած Շապուհ Բագրատունու, Յովհաննէս Մարգարի, Միսիթար Անհցու, Յովհաննէս Վանականի, Վահրամ օրդի Տիգրանայ և Յովհաննէս Կողեանի կորած երկերից, ինչպէս երբեմն որոշակի, երբեմն էլ մօտաւոր ձշութեամբ համապատասխան հատուածները զատարուում են ըստ այնմ, թէ ո՞ր ազրիւրից են քաղուել, կամ՝ կարող էին

(32) Մխիրար Անեցի, նշուած աշխատութիւնը, էջ 15:

ԴՐԱՄԱԳԻՏԱԿԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄՆԵՐՈՒ ՆՈՐ ՀԱԽԵՔԱԾՈՆ ԹԱՆԳԱՐԱՆԵԿ ՆԵՐՈ

ՀԵԹՈՒՄ Ա - ԶԱՊԷԼ - Լևոնի գուշակը Զապէլ ամսաւուացաւ Լամբրոսի իշխան Պայլ կոստանդինի զաւկին հնատ, այսպէսով միացնելով կիլիկեան Հայաստանի երկու ամենազօրաւոր տաճերը: Այս ամսաւութիւնը զօրացուց երկրին ներքին վիճակը և պատճառ հղաւ որ կիլիկիա շարունակէ իր գոյութիւնը Խաչակիրներու անկումէն վերջ:

Հեթում յորդելով իկոնիոյ Սուլթանին հնատ լևոնի գաշնակցութիւնը, համանեց փաքրաթիւ երկլեզուեան չատ գեղցիկ դրամները⁽²³⁾: Այս դրամները հազուագիւտին, իսկ երկլեզուեան կէս-դրամները՝ շատ հազուագիւտ:

Այս երկլեզուեան արծաթներուն առ կողմին վրայ կը տեսնուի Հեթում ձիաւոր, որ ձեխ կ'ընթանայ: Աջ ձեռքով բռնած է լախտ մը, որ ուսէն վար կ'երկարի: Այս տիպը կը յիշեցնէ իկոնիոյ Սուլթանին դրամնարք Դրամին բազմը արաբերէն է և կը կրէ Սուլթան Բայքոսպատի կոմ Բայքոսորովի անունը, նոյն

⁽²³⁾ P. Z. Bedoukian, «A Hoard of Bilingual Trams of Hetoum I of Cilician Armenia.» The American Numismatic Society Museum Notes 23, (1978), pp. 149-160. Pls. 32-35.

քաղուած լինել ու մուտք գործել «Հաւաքումն Պատմութեան» մէջ:

Այս հմքով կարելի է տաել, որ կորած յիշեալ երկերից բռւարար չափով փաստագրական նիւթ ու բնագրական ուղղակի և վերաշարագրուած հատուածներ պահպանուել ու փրկուել հն կորստից: Տարակոյս չկայ, որ միւս մեզ հասած եր-

ատեն յիշելով թէ դրամները կոխուած են Սոսյ մէջ:

Ա. կողմին գրութիւնն է, տարբերութիւններով:

ՀԵԹՈՒՄ ԹԱՂԱՀԻՈՐ ՀԱՅՈՅ:

Հաւաքումն կը պարունակէ երկու դրամներ Բայքոսպատէն, չորս հատ Բայքոսորովէն և կէս-դրամ մը Բայքոսորովէն:

Հեթում-Բայքոսպատ, Hetoum I-Kai-kobad, Bed. No. *776, 776v.

Հեթում-Բայքոսորով, Hetoum I-Kai-khusrev, Bed. No. 807, 806v, 806v, *820.

կէս-դրամներ, Half-trams, *841, *1286:

Հեթում հատանեց մեծ քանակութեամբ գեղցիկ արծաթ դրամներ, զորս կարելի է բաժնել քանի մը մասերու: Այսպէս կ'երեխ թէ նորէն գեղցիկ դրամները կոխուած են սկզբնական շրջանին և ցած արաւեստով դրամները՝ վերջի տարիներուն⁽²⁴⁾:

Այս արծաթներուն բալորին վրայ կը տեսնուի ու կողմը թագուարն ու թագաւհին կանգնած գէմ դիմաց, արքայական զգեստով և երկուք նոյն խոչը բռնած:

⁽²⁴⁾ P. Z. Bedoukian, «Two Hoards of Hetoum-Zabel Trams,» The American Numismatic Society Museum Notes VIII (1958), pp. 145-180. Pl. XXXIX.

կերի ողբիւրագիտական մանրազննին քննութիւնը նոյնակէ կը բերի յաւելեալ լրացումներ, որոնց նշանակութիւնը և բացայտած երկուաստեք, թէ՝ քննուող երկի, թէ՝ մեզ առ այսօր չհասած երկերի աղբիւրագիտական, բնագրագիտական և պատճառակիտական վիճակի ու արժեքի բացայտաման համար: